

«ցան զիս ընդունել . այժմ ես մինակ  
«ի՞նչպէս սիրտ անեմ նոցա մէջ երթա-  
«լու, կամ այնպիսի ժողովրդոց առաջ-  
«նորդութիւն անելու . ուրիշ բան էր  
«եթէ կամենայիք ձեռքս կոնդակ տալ,  
«յորում բանադրանք եւ նզովք գնէիք  
«զիս չընդունողներուն եւ ինձ հնազան-  
«դիլ չկամեցողներուն» : Հաւանեցաւ  
խեղճ կաթուղիկոսը, տուաւ նիկոլին  
ձեռքը այնպիսի սպառնալից կոնդակ  
— զոր գուցէ ինքն իսկ նիկոլ շարա-  
դրած էր, — եւ դարձուց նլփով:

Նիկոլ դարձաւ, եւ առաջին կիրակի  
օրը կարդալ տուաւ այն կոնդակն ու  
նզովքները եկեղեցւոյն մէջ: Խլվովի ժո-  
ղովուրդն եւս մինչեւ այն ժամանակնե-  
րը այն բարեմիտ ժողովուրդներէն էր  
որ չգիտնալով այս ճշմարտութիւնս թէ  
«Անիրաւ բանադրանքը եւ անտեղի նը-  
զովքը՝ բանադրողին ու նզովողին գըլ-  
խուն կդառնայ, իսկ բանադրելոց օրհ-  
նէնքի տեղ կըռնեն», տրտմեցան՝ տրխ-  
րեցան՝ գայթակղեցան ու լրեցին:

( Ն Ե Ր Ա Ր Ա Ր Ա Ն Հ Ա Յ Ա Վ Ա Ր Ա Ր Ա Ն )

Գ. Ա. Ա.

## ՍՈՒՐԲ ՍԱՆԴՈՒՔԻՑ.

( Ն Ե Ր Ա Ր Ա Ր Ա Ն Հ Ա Յ Ա Վ Ա Ր Ա Ր Ա Ն )

Ճնէին, վերջապէս հրաման տուաւ որ  
Սանդուխտ իրեն ներկայանայ: — Սանատ-  
րուկ և Սանդուխտ են միայն . աստուա-  
ծային սիրոյ հանդէս, հրաշալի է մարտը,  
և յաղթանակը մեծ:

Զգեց աչքը Սանդուխտ վերայ, դիտեց  
զինքը երկար ատեն, գորովեցաւ, խանդա-  
ղատեցաւ, կատաղութիւնը թողուց հե-  
ռացաւ իրմէ, և յանկարծական ժպիտ մի  
փայլեցաւ փոթորկայոյզ աշաց մէջ, ինչ-  
պէս միզապատ երկնից երեար ամսկերէն  
փայլատակած լոյսը կլուսաւորէ, և զար-  
ձաւ ցաւադին հօր նման նուազած ձայ-  
նիւ ասաց, — « Ո օ տ ե կ ի մ զ ե ղ ե ց ի կ զ ո ւ ս-  
տըր, մօտ եկ, և ընդունէ հայրական համ-  
բոյր» . — բայց Սանդուխտ չլսեր հօրը  
ձայնին, և նորա գգուանքը կմերժէ, ուս-  
տի նորէն կրկնեց. « Ո վ որդեակ, քան ա-  
մենայն ցաւ մեծ է ինձ այս. հնազանդ  
էիր ինձ և կսիրեիր զիս, զու իմ՝ միակ  
մսիթարութիւնս և խնդութիւնս, ով  
գողացաւ սիրտդ ովլ ծնողդ աչքէդ հա-  
նեց» : — Ասկայն Սանդուխտ զարձեալ  
պատասխան չտուաւ. այն ատեն, « Գի-  
տեմ, կանչեց լալազին ձայնիւ, դիտեմ,  
այն Պաղեստինացին մոլորեցուց զքեղ,  
զողացաւ սիրտդ և բաժանեց զքեղ ու  
միայն հայրենի չաստուածներէդ՝ այլ և ք-  
հօրդ սրտէն. ուրացար զիս, որդեակ իմ՝  
մոռացար գութս՝ որով խնամեր եմ զքեղ.  
և սիրեցիր քան զիս առաւել Պաղեստի-  
նացին և իւր աստուածը» : — Եյն ատեն  
Սանդուխտ համեստ ձայնիւ հօրը պա-  
տասխանեց. « Ոիրոյս և հաւատարմու-  
թեանս վերայ մի կասկածեր, և մի նախա-  
տեր ճշմարիտ Աստուածոյ անունը. ճանչ-  
ցայ զինքը, սիրովը հոգիս վառեց, ոչ ոք

Առաքեալը զարձաւ ի բանու, բայց թա-  
դաւորին ոչ բարկութիւնը և ոչ սրաին  
տաղնապը հանդարտեցաւ. հայրական  
գութը, սէր, վրէմինդրութիւն և բար-  
կութիւն մաքառելով իրերաց յաղթել կը

իրնայ զիս այսուհետեւ նորամել բաժնել ։ ուր էր և զու նորա սիրոյն քաղցրութիւնը զգայիր, ուր թէ և զու զինքը ձանչ նայիր ։ :

«Աւրեմն այն խարերայ Պաղեստինացոյն խօսքերուն հաւատացե՞ր ես, կրկնեց Անատրուկ, ուրեմն չուղես հօրդ անառ, մն զիտեր որ ամեն աշխարհ այդ աստուածը կհալածեն, և նորա պաշտօնեայքը կը խողովեն. չտեսա՞ր որ ես ես այն Պաղեստինացին մեռցնել կուզեի. չլեցի՞ր որ ժողովուրզը վրէմինդրութիւն կըօղոքէր, և ես ընդդէմ արդարութեան զից լսեցի աղաշանացգ և կեանքը իրեն շնորհեցի, իսկ զու զաղառուկ հօրմեդ հետը գործակից ես, ի՞նչ ասեմ ժողովրդեանս, ինչպէս արդարութեան հակառակ կենամ» ։

Կրկնեց Աննդուխա. «Եստուծոյ սիրոյն համար պատրաստ եմ կեանքս և արիւնս նուիրել, կատարէ արդարութիւնը, առանզօր աղջիկէդ վրէմինդրութիւնդ. բայց երբ արեամբս ձեռքերդ թաթաւի, պիտի սոսկաս, ետ պիտի կանչես հարուածը բայց պիտի չպատճայ, և ջերմաջերմ սուրը իմ սրտէս հանելով քո սիրտդ պիտի ուղղես, և ես գեանատարած ուգերուդ տակ տակ տապալած դեռ զքեղ կաիրեմ. ա՛հ, ուր էր թէ իմ մահուամբս զգաստանայիր. ուր էր թէ աչքերդ վրաս դարձնէիր, սոսկայիր, զողայիր, և ես այս խօսքերը լսեի բերնէդ, ներէ ինձ զուստը իմ, ներէ անդութ հօրդ, և խնդրէ Եստուծմեդ որ ինձ ես պարզեէ այն շնորհքը՝ որով զու լուսաւորեալ ձանչցար զինքը, և նորա սիրոյն համար մահ յանձն առիր ։ :

Խօսքը կնքեց Աննդուխա, և բորբոքած աչքերով դէպ ի հօրը կնայէր. Ես-

տուածային շնորհաց լուսով կրեսները կը վառէր, և իբրեւ լուսաւոր հրեշտակ կերեւ հօրը, որոյ փառքէն և զեղեցկութենէն աչքերը շլացած չեր կրնար վրան նայիլ։ Աւստի երեսը մէկի գարձուց, նուազեցաւ, ընկաւ, պատառեց ծիրանին, նեաց թաղը յերկիր և յուսահատ ձայնիւ սկսաւ կանչել. «Վկ անօրէն ծերունիդ, եկար վրդովեցուցիր աշխարհիս խաղաղութիւնը և արքունեաց փառքը. անզութ անողորմ, իմ միակ խնդութիւնս ձեռքէս յափշտակեցիր. եթէ թագաւորութիւնս ուզէիր՝ յօժար էի տալ զայն քեզ քան այս կորուսաը կրել, գարձուր ինձ իմ Անդուխաս զարձուր, և ես փոխարէն տամ քեզ թազ, աշխարհ և զանձ։ — Եսկ զու դթա թշուառ հօրդ, զուստը իմ՝ եթէ հայրական ձայնէս չես պատկառիր՝ զէթ արտասուքը զքեղ ողոքն։ ատէ, օտարական ծերունին, թող և ուրացիր աստուածը, և գարձիր նորէն իմ զիրկս։ — Վկ երջանիկ ժամեր, քանի քանի՛ անզամ զքեղ զրկացս մէջ զգուած, հայրենի բազուկներս պարանոցդ ձգած զուարթացած եմ. քանի՛ քանի՛ անզամ, երբ ժողովրդեանս հոգերով բեռնաւորեալ թագաւորութեանս գործերով կծանրանար զաւազանս, քանի՛ քանի՛ անզամ սիրալի ժաղիտներովդ և հայեցուածքովդ միսիթարեր կազզուրեր ես զես. արդ կատե՞ս և կը զզուին. — եկ զուստը իմ եկ, քեզ համար են զահոյքս և փառքս. թող այն մոլորեցուցիը, անսա ինձ, եկ գարձեալ զիրկըս հանգչէ, և միսիթարէ վշաացեալ հայրըդ։ :

Լուց թագաւորը, զօրացաւ ելաւ զաշէն, և թեւերը բացած վաղեց որ զբկէ ըզ-

Անդուխտ. իսկ Անդուխտ ձեռքը ընդդէմ ձգեց և ասաց. — «կեցիր, հայր իմ, պիզծ են ձեռքերդ որով ինձ կփարիս, և անսուբր են շրթունքդ որով զիս կուզես համբուրել. վասն զի կնախատես ջմարիս Աստուծոյ անունը. կգարշիմ, կզզուիմ այսուհետեւ զրկեղ, ուր չկայ անարատ սեր և խաղաղութիւն հոգւոյ. կթողում քեզ իմ տեհն վայելչութիւններս, ետ կղարձնեմ պարզեւներդյ կանարգեմ գահը, որոյ վերայ Աստուծոյ փառքը և անունը չկայ: Ասիրեմ զքեզ, կհնաղանդիմ եթէ հոգւոյս ջմարտութեանց չեշխես, եթէ չբռնադատես որ ուրանամ զԱստուած. եթէ չհայհոյես սուրբ անունը, և թողուս որ ազատ պաշտեմ զինքը. չեմ ուրանար զԱստուած, չեմ կրնար զքեզ քան զինքն առաւել սիրել, նորա համար մահուան ընդառաջ կփաղեմ»: — թող մրցին տկար լանջիս հետ ամենայն սպառնալիք, թող շողան վերաս սուր և նիզակ, թող դարնեն արիւնս ծծն, թող որ մեռնիմ հայր, բայց միայն զննքը չուրանամ»:

Այժմակի նման զարկաւ Անատրիոյ սիրտը, շուարեցաւ, ազշեցաւ, թմրեցաւ, և խոժոռազիմ անմարթափ աշօք վերան կնայեր. և ահա յանկարծ բոլոր մարմնով դողալ սկսաւ. մրրկախառն ծխոյ մեջ ատեն պատեն փայլած կրակին նման աչքերը կը ողողար, յօնքերը տէդ տէդ ցցուեցան, զիւոյն մազերը կանգնեցան, և ձեռքը ի սուր ձգելով մերկացաւ զայն պատենէն, շողացուց, շողացուց, մռնչեց զազանի նման, յարձակեցաւ Անդխառոյ վերայ, և զարհուրելի ձայնիւ որոտաց. «Յանդուզն աղջեկ, ապերախտ զաւակ, հայրդ ոտքերդ խոնարհած կաղաչէ, և դու նորա արտա-

սուքս կանարգես, կխատացնես սիրտդ, կարհամարհես սէրը և զմութիւնը. զնա ուրեմն, զնա վայելէ շուտով յուսացած փառքերդ»: և կուզեր հարուածը իջենել. — բայց իշխանը և մեծամեծք ներս թափեցան, առին սուրբ Անատրիոյ ձեռքէն, յափշտակեցին զԱնդուխտ և տարին:

Ո՞ր. — բացէք բանդին դոները, բացէք. — քսամնելի տեսարան, ով է այդ մահապարաք, և ի՞նչ է մեղքը որոյ համար արժանի եղեր է բանդի և կապանաց. — զեղեցիկոյս, արինահատակ, Աստուծոյ վկայն, Հայատանի հրեշտակը. — ով. — Հայոց արքայազուսարը չքնաղազեղն Անդուխտ, Աստուծոյ անուան վկայութեան համար ի բանդ գատապարտեալ է: Անկարեկին հայր, անգութ ծնողք, մոռացար որպիսկան գութդ, ատեցիր ուրացար զաւակի, — ի՞նչ անշուք տեսիլ, ոսկեթել պատմուձանը մերկացած մահպարաքի զգեստ հագեր է, մազերը խոռուած վշտացեալ հրեսներէն վար կթափին, ականակուռ զրբխոյն պսակը և մանեակիլ Աստուծոյ նուիրած՝ ծանրակիր շղթաներով լուսափայլ փափուկ ձեռքերը և ոտքերը կաշկանդուած են, փոխանակ պայծառ առազատին խաւարչուտ բանդ, և փոխանակ գահին անկոփ արտասոյ վէմ. հազիւ լուսոյ նշոյլը ներս թափանցելով խաւարին թանձրութիւնը կփարատէ, ականջեղ կհնչեն մահապարաց հառաչանքները, աչքիդ կը զարնեն արեան կաթիլները, ոտքերուդ տակ չորցած կմախքները ճարճատելով կփշին, և կտեսնես արիւնաների մահուան տապարը ժանդուտեալ բանտին անկիւնը կեցած կը մնամուաց:

Զեռն ի ծնօտ զրած կեցած է Ասն-  
դուխա, վեր վերուց աչքերը և բանդին  
չորս կողմը նայեցաւ, գեղեցիափթիթ այ-  
տերը խորշակահար թառամեալ վարդե-  
րու կնմանեին, և արտասուտց շիթերը  
մարզարտաց նման աչքերէն զլորելով ծո-  
ցը կետափեին, կհեծեծէ, և ստէպ ստէպ  
վեր նայելով Վասուծոյ անունը միայն շըր-  
թունքներէն կլուի: — « Հազիւ կրցաւ շըր-  
թաները երկու ձեռօք ամփոփելով վեր ել-  
լիլ, չքեցաւ հոն, շղթաները ձեռքէն թա-  
փեցան, և նոցա շառաչիւնէն բանտը թըն-  
դած, և սրտառուչ ձայնիւ այսպէս սկսաւ  
ազօժել. » « Հաւատացի քեզ Տէր, սիրոյդ  
համար թողուցի ամեն վայելը ութիւններս,  
և սիրեցի այս կապանքներս յանուն քո  
քան հօրս թափաւորութիւնը, մի՛ բաժներ  
զիս ի սիրոյդ զօրացուր զիս որ կեանքս  
և արիւնս նաև քեզ նուիրիմ» :

Ելաւ կրկին, հառաչեց, և այս բառերը  
լուծեցան. « Հայր, շնորհակալ եմ ինձ մահ  
պարզեած կապանքներուդ համար, կսի-  
րեմ զքեզ, և քեզ համար Վասուծոյ կա-  
զաչեմ» : « Եոյն միջոցին բանդին դռները  
աներեցի զօրութեամբ բացուեցան, պա-  
հապանք զարհութած թռան եղան, սու-  
սերամերկ կընթանան, իրարու ձայն կու-  
տան, կհարցնեն և ոչ ոք չնն տեսներ : —  
Եհա սուրբ Առաքեալը Խապէոս ներս մը-  
տաւ, մօտեցաւ Վասուծոյ վկային և հրե-  
ղին շրմանց համրուրիւ համրուրեց Քը-  
րիստոսի տատրակին ոտից և ձեռաց սուրբ  
կապանքը և ասաց. « Երանի՛ է քեզ զուս-  
որը երկնաւոր թափաւորին, երանի՛ է որ  
արժանի եղար նորա սիրոյն համար այս  
շղթայքը կրել» . — և առ Վասուծ զառ-

նաչով կիմնդրէր որ զօրացնէ զինքը՝ որ իւր  
աղայութիւնը իրեն նուիրեց:

Պահապանք այս սքանչելիքը տեսնելով  
ոմանք զարհուրած կժագեն կուզան առա-  
քելոյն ոտքը կփարին, ոմանք ահարէկ կըն-  
թանան թափաւորին ապարանքը և եղած  
անցքը կպատմեն: Խապաւորին զայրոյթը  
զեռ փարասած չէր, ուստի այս լուրը լը-  
սածին պէս առաւել ևս կատաղութեամբ  
բորբոքեցաւ. « Դեռ կենդանի՞ է, զուեց,  
անօրէն ծերունին, զեռ չզգաստացան յան-  
դուզն աղջիկս: — Ով զիք, այս ի՞նչ աղէտ  
է որ ինձ սոււիք. ի՞նչ զործեմ . . . վրէժ  
ինզրեմ . . . թաթաւեմ ձեռքերս զու-  
ւակիս արեամբ . . . բայց հայր եմ . . .  
զաւակս է . . . հոգւոյս հասորը, կեան-  
քիս մէկ մասը: — Խնչպէն տեսնեմ զինքը  
ոտքերուս տակ դիաթաւալ տապաստ ան-  
կած արեան մէջ ծփալով ողորմ ողորմ  
աչքերը վրաս դարձնէ. յորդահոսան ար-  
եան շիթերը վերքէն վազելով հեծեծէ, և  
երբոր մահուան ստուերը ձակատը սկսի  
պատել, և աչքերուն լոյսը հետզհետէ զի-  
ջանելով վերջին անգամ ինձ դառնայ և  
ասէ, « Խնչութ զավան հայր, կըկնէ հա-  
րուածդ, մի զողար, խմէ արիւնս և կշտա-  
ցիր » . ինչպէն չզմամ նորա:

Մըրկածուփ ալետանջ ծովը բռնաշունչ  
հողմերէն այնպէս ուժգին չի յուզեր և չը-  
խուզիր՝ ինչպէս Անատոլիոյ հողին, սիրար  
կինջնէր կեղեր ինչպէս բոցավառ ծծմբային  
անդունոց, փորձեց շատ անգամ, մահուան  
վճիռը ուզեց տալ, բայց ինչուան շրմանց  
դուռը համնելով կրկին ետ ի հոգին կը  
զառնար հրամանը: Իսայց վերջապէս կա-  
տաղութիւնը զօրացուց զինքը, « Վեռնի,  
մեռնի զուեց. զից պատիւը պահուի, և

զգաստանայ ժողովուրդս այս օրինակէս : — Իսկ ինքը յուսահատ և անզգայ առանձնացաւ ի զահոյս և ինքը զինքը սկսաւ ողբալ :

Քաղց ամսոյն առաւօտն էր. Շաւարշանու փողոցները ամբոխը կլունի, կը զիզուի, և զեպ ի մահապարտաց բանդին դուռը կվազեն: Դռները բացուեցան, և ծանր ծանր քայլերով, աչքերը զեպ ի խոնարհ, վայելահասակ, համեստ և պարկեցագով, արի և աներկիւդ, դաշիճներով շրջապատեալ Աանդուխտդուրս ելաւ, : — Տեսէք Հայեր, ձեր զշխոյն, տեսէք, ոտքը ձեռքը կապանք ահա ի մահ կտանին. մւր է թաղը, մւր փառքերը, մերկացաւ այն ամենը Աստուծոյ սիրոյն համար. մեծ է այս փառքը՝ քան երբեմն պայծառ փառաց մէջ չքնաղազեղ երեսաց երկրպագութիւն կանէիք, վազեցէք ձեր վերջին մեծարանքը և պատիւր ընծայեցէք իրեն, և համբուրեցէք ոտից և ձեռաց սուրբ կապանքը:

Հասան մահապարտաց կառավինատեղին, — զահձապետը հրաման տուաւ, զահիճը սուրբ մերկացաւ, և յարձակեցաւ Աանդիսոյ վերայ, բայց աներեւոյթ զօրութիւնը մղեց, յետս ընկըկեց զինքը, և զարկաւ զահձապետը մեռուց: Դահիճները ամենքը մէկ սրերը մերկացան, բայց կը պատկառին քովը մերձենալ, երեսները երկնային փառքը լուսաւորեալ՝ զահձաց աչքերը շլացան, և սկսան մէկզմէկ կոտորել. — իսկ Աանդուխտ կազօմէ, զօրութիւն կլնողը, Աստուծմէ, և կցանկայ շուտով հարուածը ընդունիլ: Եհա զահիճներէն յանդուզը սուրբ ձեռքը փազեց, և միեց կուսին փափուկ սիրուը: — « Ենօրէն

զու, ի՞նչ դորձեցիր », դոչեց ժողովուրդը, բայց զեանատարած անկաւ շնչասպառ, արեան մէջ կծփայ, և հրեշտակը առին հոգին երկինք թռան:

Աանատրուկ կմոնէ, յուսահատ ինքը զինքը կիրծէ. ժողովուրդը իւր թագուշոյն սուզը կքաշէ, իսկ ինքը նախաշաւկդ վկայն սուրբ Աանդուխտ Հայաստանն ի բոխն կըթռաչի երկինք զայն Աստուծոյ նուիրել:

ՄԿՐՏԻՉ ՊԱԼԵԱՆ.

### Ե Ա. Խ Ձ Խ Ա Ճ Յ Ն.

## ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԵՆԵԳԵՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՍԵՆՈՒՄԸ \*

Գ. Շ. Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ի Ց Հ Ա Ն Ա Յ .

1842 թիւ. 12 օդաստուն.

ՄԱՐԱՐԹՈՒՆ ՆԱԽԱՎԱԿԱՅԻ ՎԱՆՅԱԲՈՒՄԸ.

(ԵՐԵՎԱՆԻ ՏԻՄ.)

Միայնակեցի երեար զեպ ի դուռն էր, ուստի և քարայրը միայն լոյս էր ստանում: Պատմ որոյ և շատ պարզ էի տեսնում ես նրա կերպարանքը, որ վիշ էր և պարզ. նայուածը սաստիկ զզացմունք էր յայտնում տիսրութեամբ խառն. բազմելուց երեսում էր, որ հասակը պարթե է, երես սպիտակ և խառն կարմրութեամբ, քիթն արծուանման, աչքերը սե՝ մեծ մեծ և սըրատես, ծառագայթաձեւ արտեւանունքներ է պատաճ, այլ իմն զեզեցիւթիւն էին տալիս երեսին. մօրուքն երկար, լաւ սահարած, փառահիղ և ձիւնափայլ, ձակատը